

Հասարակական դաշինքը որպես քաղաքացիական հասարակության կազմակերպման եղանակ (Ջոն Լոկի փիլիսոփայական հայացքների օրինակով)

ՀՏԴ 141

Միննյան Համլետ Ս.

*ԵՊՀ, Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոն, մագիստրոս (Երևան, ՀՀ)
hamlet.simonyan.99@gmail.com*

Հանգուցաբառեր՝ բնական վիճակ, պատերազմական վիճակ, բնության օրենք, մասնավոր սեփականություն, խաղաղություն, համաձայնություն, հասարակական դաշինք, հասարակություն, արդարություն, հավասարություն, իրավունքներ

Общественный договор как способ организации гражданского общества (на примере философских взглядов Джона Локка)

Симонян Гамлет С.

*Ереванский государственный университет,
Кафедра социальной философии, этики и эстетики. Магистрант (Ереван, РА)
hamlet.simonyan.99@gmail.com*

Аннотация. В статье дана общая характеристика одного из важнейших учений политической философии 17-го века – «теории общественного договора». В частности, на примере философских взглядов английского либерального мыслителя Джона Локка, сделана попытка показать основы, способствующие формированию гражданского общества.

В рамках статьи обсуждаются понятия естественных и военных состояний, присущие теории общественного договора Локка, а также процесс перехода от естественного к гражданскому состоянию. Одновременно в статье проводятся необходимые параллели между учениями Томаса Гоббса и Джона Локка. В работе освещены значение института наказания, а также законы и правила, формируемые в рамках теории общественного договора. Цель работы – путем сравнительного анализа соответствующих работ выявить мотивационные элементы, которые заставляют людей перейти от естественного состояния к гражданскому. Эти вопросы до сих пор обсуждаются в рамках различных научных дисциплин, в том числе философии, политологии, юриспруденции и т.д. Тема, обсуждаемая в статье, может стать основой для разъяснения ряда социально-политических проблем и принятия решений. В заключение можно отметить, что теория общественного договора, существенно повлиявшая на развитие политической мысли, и сегодня остается в центре внимания ряда мыслителей и деятелей социально-политической сферы.

Ключевые слова: естественное состояние, состояние войны, закон природы, частная собственность, мир, согласие, общественный договор, общество, справедливость, равенство, права.

Social Contract as a Means of Formation of a Civil Society (Following the Example of John Locke's Philosophical Views)

Simonyan Hamlet S.

*Yerevan State University,
Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics, MA student (Yerevan, RA)
hamlet.simonyan.99@gmail.com*

Abstract: The general characteristics of one of the most essential doctrines of the 17th century's political philosophy, contractarianism is represented in the article. Particularly, by referring to English liberal thinker John Locke's philosophical views, an attempt is made to show the basis which promote the formation of a civil society. In the frames of the article John Locke's ideas typical to social contract theory are discussed; state of nature, state of war as well as the process of transition from state of nature to civil society. In the meantime, necessary parallels are drawn between Thomas Hobbes' and John Locke's theories. The article presents the meaning of the laws and regulations as well as the punishment institute which are formed within the theory of social contract. The aim of the article is to point out those motivational features which make people go from the state of nature to civil society. The article aims at showing the main features of social contract theory with the help of comparative analysis of relevant sources. Nowadays, the topic mentioned in the article is still discussed from the standpoints of different disciplines, including philosophy, political science, law, etc. The topic can be considered as a base for clarifying and solving a number of current socio-political issues. It is also helpful for political decision-making process. In conclusion, we may acknowledge that the theory of

social contract, having a significant impact on the development of political thought, in our days has its unique stamp on the activities of a number of thinkers and actors in the socio-political field.

Keywords: state of nature, state of war, law of nature, private property, peace, consent, social contract, society, justice, equality, rights.

Հասարակական դաշինքի տեսությունն առանցքային տեղ է զբաղեցնում փիլիսոփայության պատմության մեջ: Թեման մինչ օրս քննարկվում է ոչ միայն փիլիսոփայական, այլև քաղաքական, բարոյական և իրավական տեսանկյուններից, ինչը փաստում է այն մասին, որ չեն կորել տեսությանը ներհատուկ արդիականությունն ու հրատապությունը:

Ըստ հասարակական դաշինքի տեսության՝ մարդկանց բարոյական և/կամ քաղաքական պարտականությունները կախված են վերջիններիս միջև կնքված պայմանագրից/համաձայնագրից, որի շնորհիվ ձևավորվում են հասարակական այն նորմերը, որոնք սպասվում են մարդկանց խաղաղ համակեցությունը: Ըստ այս տեսության՝ մարդիկ միասին ապրում են հասարակության մեջ՝ համաձայն մի պայմանագրի, որը սահմանում է վարքագծի բարոյական և քաղաքական կանոններ [2, էջեր 478-481]:

Հարկ է նկատել, որ հասարակական դաշինքի տեսության հիմնական գաղափարները փիլիսոփայական համատեքստում քննարկվել են դեռևս անտիկ ժամանակներից:

Հասարակական դաշինքի տեսության մոդելը, ըստ էության, քննարկվում է նաև Պլատոնի «Կրիտոն» երկխոսության մեջ, որտեղ Մոկրատեսը ներկայացնում է անառարկելի մի փաստարկ, թե ինչու ինքը պետք է մնա բանտում և ընդունի իր մահապատիժը, այլ ոչ թե փախչի և արտոլի հունական մեկ այլ քաղաք [1]: Այնուամենայնիվ, հասարակական դաշինքի տեսությունն ավելի սերտորեն կապված է բարոյական ու քաղաքական ժամանակակից մտքին: Իր ամբողջական մեկնաբանությունն այն ստացել է անգլիացի մտածող Թոմաս Հոբսի աշխատություններում:

Հասարակական դաշինքի տեսության մասին Հոբսը հանգամանորեն գրում է «Լևիաթան» հայտնի աշխատության մեջ՝ նշելով, որ մարդիկ, ապրելով բնական վիճակում, գտնվում են վախի, թշվառության ու եսասիրության մթնոլորտում: «Բնական վիճակում մենք գտնում ենք մարդկանց միջև տեղի ունեցող վեճերի երեք հիմնական պատճառ: Առաջինը մրցակցությունն է, երկրորդը՝ խտրականությունը, երրորդը՝ փառքը», - գրում է Հոբսը [3, էջ 77]: Մարդը դիմում է հասարակական դաշինքի՝ ինքնապաշտպանվելու, գոյատևելու, ցավից ու թշվառությունից հեռու մնալու համար:

Հոբսից հետո անգլիացի մտածող Ջոն Լոկը կառուցեց սեփական տեսությունը՝ մեծապես

ազդելով արևմտյան քաղաքական և փիլիսոփայական մտքի զարգացման վրա:

Լոկի քաղաքական ամենակարևոր ու ազդեցիկ մտքերը շարադրված են «Երկու տրակտատ կառավարման մասին» աշխատության մեջ, որտեղ հեղինակն անդրադառնում է նաև հասարակական դաշինքին ու վերջինիս նշանակությանը:

Ջոնի Լոկի՝ հասարակական դաշինքի տեսությունը էապես տարբերվում է դաշինքի հորսյան ըմբռնումից: Լոկը համակարծիք էր Հոբսի այն մտքի հետ, որ մարդիկ գտնվել են բնական վիճակում (State of Nature), սակայն բնական վիճակի լոկյան ըմբռնումը միանգամայն տարբերվում է դրա հորսյան մեկնաբանությունից: Եթե Հոբսն ասում էր, որ մարդու կյանքը բնական վիճակում վախով ու եսասիրությամբ է լցված, որ մարդն ապրում է մշտական վախի, դաժանության, աղքատության, թշվառության քառսային վիճակում, որ բնական վիճակում գործում է «Մարդը մարդուն գալ է» սկզբունքը, ապա Լոկը պնդում էր հակառակը՝ ասելով, որ բնական վիճակում մարդիկ, ունենալով հավասար իրավունքներ, ապրում են քիչ թե շատ խաղաղ ու համերաշխ կերպով: Լոկյան մեկնաբանության դեպքում, փաստորեն, բնական վիճակին արդեն իսկ բնորոշ են քաղաքացիական հասարակության տարրեր, որոնք սպասվում են անցումը բնական վիճակից քաղաքացիականին: Այս գործընթացը հնարավոր է դառնում միայն մեծամասնության կամքի առկայության շնորհիվ: «Յուրաքանչյուր մարդ, կնքելով հասարակական պայմանագիր, լիազորում է իշխանությանը կամ հասարակությանը մշակելու օրենքների ու կանոնների այնպիսի համակարգ, որը կսպաստվի իր և մնացածի սպասվողությունն ու բարեկեցությունը» [5]:

Պայմանագրականության հիմքում դնելով նաև մասնավոր սեփականության հիմնախնդիրը՝ Լոկը փորձում է նաև բացատրություն տալ այն հարցին, թե ինչպես են փոխկապակցված վերջիններս: Մասնավոր սեփականությունը առանցքային դեր է կատարում քաղաքացիական կառավարման լոկյան փաստարկում, ինչպես նաև համաձայնության մեջ: Լոկի կարծիքով՝ մասնավոր սեփականությունն առաջանում է այն ժամանակ, երբ մարդն իր աշխատանքը միացնում է բնությունից ստացվող հումքի հետ: Հաշվի առնելով բնական օրենքի (Law of Nature) հետևանքները՝ գոյություն ունեն մարդկանց՝ գույք ունենալու սահմանափակումներ: Մարդկանց չի թույլատրվում բնու-

թյունից վերցնել ավելին, քան նրանք կարող են օգտագործել՝ չթողնելով մյուսներին հավասարապես օգտվել այն ամենից, ինչը ընդհանուր է բոլորի համար. բնությունը տրվում է ընդհանուր մարդկությանը՝ վերջինիս կենսագործունեության կազմակերպման համար:

Լոկը բնական վիճակում սեփականությունը համարում էր ոչ ապահով երեք հիմնական պատճառներով՝ սահմանված օրենքի բացակայություն, անկողմնակալ դատարանի բացակայություն, բնության իշխանության բացակայությունը բնական օրենքներն իրականացնելու համար: Ուստի, բնական վիճակում մարդը, ըստ Լոկի, կարիք է գգում պաշտպանելու իր սեփականությունը, և հենց այս նպատակով մարդիկ որոշում են հասարակական դաշինք (Social Contract) կնքել: Անհատը շարունակում է ունենալ ապրելու, ազատության, սեփականության իրավունքներ. սրանք համարվում են մարդկանց բնական և անքակտելի իրավունքները:

Իրենց համաձայնության արդյունքում ստեղծելով քաղաքացիական հասարակություն և կառավարություն՝ մարդիկ ձեռք են բերում այն երեք բաները, որոնք չկային բնական վիճակում՝ օրենքներ, դատավորներ և գործադիր իշխանություն, որն անհրաժեշտ էր այդ օրենքները կիրառելու համար: Այսպիսով՝ յուրաքանչյուր մարդ տալիս է իր ուժը՝ պաշտպանելու իրեն և պատժելու նրան, ով կխախտի բնության օրենքները [4, էջեր 100-101]:

Խոսելով լոկյան պայմանագրականության հիմնադրույթներից՝ չենք կարող չնկատել, որ մտածողը հասարակական դաշինքի տեսությունը կապում է բնական վիճակին: Ըստ Լոկի՝ քաղաքական իշխանությունը ճիշտ հասկանալու համար նախ պետք է հասկանալ, թե ինչ վիճակում են մարդիկ ի սկզբանե գտնվում. վերոնշյալ վիճակը նա բնութագրում է որպես կատարյալ խաղաղության վիճակ, որի պայմաններում մարդն ինքն է կարգավորում իր գործողությունները, տնօրինում ունեցվածքը, ինչպես որ համապատասխանում է բնության օրենքին՝ առանց որևէ մեկի կամքից կախյալ լինելու [4, էջեր 101-102]:

Լոկի կարծիքով՝ բնական վիճակը «հավասարության վիճակ է, որտեղ բոլոր ուժերն ու իրավասությունները հավասար են. ոչ ոք չունի ավելին, քան մյուսը, ավելի ակնհայտ ոչինչ չկա, քան այն, որ միևնույն տեսակն ու կոչումն ունեցող արարածները, ունենալով բնությունից տրված միևնույն առավելությունները, պետք է լինեն հավասար առանց որևէ հայատնակցման կամ ստորադասման» [4, էջ 101]: Եվս մի կարևոր նկատառում. Լոկի բնութագրմամբ՝ «բնական վիճակը ազատության վիճակ է, բայց ոչ արտոնության» [4, էջ 102]: Սա նշանակում է, որ

չնայած մարդը գտնվում է ազատ վիճակում, սակայն չկա որևէ բարոյական կամ իրավական նորմ, որը թույլ է տալիս մարդուն ձեռք բարձրացնել իր իսկ անձի վրա: Այս պարագայում գուցե հարց առաջանա, թե ինչու են մարդիկ որոշում անցնել քաղաքացիական հասարակության, եթե բնական վիճակում այսքան բարվոք պայմաններ են առկա: Ըստ Լոկի՝ անկախ բնական վիճակի ազատական ու հավասարապաշտական պայմաններից՝ մարդն այնուամենայնիվ, եսասեր և կողմնապահ է, մարդը հակված է նախևառաջ իր շահով առաջնորդվելուն, ինչպես նաև մարդկանց հանդեպ կողմնապահ ու կանխակալ վերաբերմունք ցուցաբերելուն: Քանի որ նման երևույթները խաթարում են մարդկային փոխներգործունեությունը, մարդիկ անցում են կատարում քաղաքացիական վիճակի: Եվս մի փաստարկ՝ կապված քաղաքացիական հասարակությանն անցնելուն. բանն այն է, որ պայմանագրականությունը լիովին ազատված չէր կրոնական վարդապետության գաղափարական ազդեցությունից (պետք է հաշվի առնել որ այնուամենայնիվ, պատմականորեն դժվար էր 17-րդ դարում միանգամից ու ամբողջությամբ հեռանալ միջնադարյան աստվածակենտրոն մտածողությունից, այսինքն՝ բնական է որ վերջինս ինչ-որ կերպ առկա է նաև 17-րդ դարի քաղաքական մտքում), ուստի Լոկը պատճառաբանում է. «Աստված մարդուն չի ստեղծել միայնակ մնալու համար: Մարդու բնական հակումը հասարակության մեջ իր նմանների հետ լինելն է», - [4, էջ 133] այսպես է հեղինակը բնութագրում մարդկային էությունը՝ ըստ այդմ էլ նշմարելով ևս մեկ պատճառ, թե ինչու են մարդիկ ձգտում համակեցության:

Բնական վիճակում գործում է բնության օրենքը, ու մարդիկ պետք է ենթարկվեն դրան: Ենթարկվելով այդ օրենքին՝ մարդիկ սովորում են լինել հավասար ու անկախ. ոչ ոք չպետք է վտանգի դիմացինի կյանքը, առողջությունը, ազատությունը, գույքը և այլն: Բնական վիճակում մարդիկ գերծ են միմյանց նկատմամբ ոտնձգություններ կատարելուց, ինչպես նաև միմյանց վնաս հասցնելուց: Այս կերպ է պահպանվում բնության օրենքը, որը միտված է խաղաղությանն ու ամբողջ մարդկության պահպանմանը:

Սակայն ստացվում է, որ այս դեպքում բնության օրենքի կիրառումը հայտնվում է բոլոր մարդկանց ձեռքերում. յուրաքանչյուր մարդ իրավունք է ստանում պատժել օրինախախտին այնքանով, որքանով կարող է կասեցնել վերջինիս՝ հասարակական դաշինքից չբխող գործողությունները: Լոկի կարծիքով՝ ինչպես մարդկանց վերաբերող այլ օրենքները, այնպես էլ բնության օրենքը անհիմաստ կլինել, եթե

բնական վիճակում չլինելին մարդիկ, ովքեր իրավունք կունենային կիրառել այդ օրենքը՝ դրանով իսկ պահպանելով անմեղներին և զսպելով օրինազանցներին: Եվ եթե որևէ մեկը իրավունք ունի մյուսին պատժելու չարիք գործելու համար, ապա բոլորը պետք է ունենան այդ իրավունքը, որովհետև սա կատարյալ հավասարության վիճակ է, որտեղ մեկը մյուսի հանդեպ չունի գերազանցություն: Լոկի այս մտքից տպավորություն է ստեղծվում, որ բնական վիճակում, անգամ լինելով հավասար, այնուամենայնիվ մարդիկ կարող են իշխանություն ու գերակայություն բանեցնել միմյանց նկատմամբ: Լոկը պարզաբանում է նաև այս դրույթը՝ պնդելով, որ հանցագործին պատժել չի նշանակում ունենալ բացարձակ կամ բռնապետական գերիշխանություն վերջինիս վրա, չի նշանակում, որ կարելի է օգտագործել նրան՝ սեփական շահերից ու դրդապատճառներից ելնելով: Օրինախախտի հանդեպ կիրառվող պատիժը ոչ այլ ինչ է, քան փոխհատուցման ու հետագա զսպվածության պահանջ: Այս երկուսը այն պատճառներն են, որոնք դրդում են մարդուն իրավականորեն «վնասել» դիմացինին, եթե վերջինս հանցանք է գործել: Նշված գործընթացը մտածողն անվանում է պատիժ:

Կառավարման խնդիրներին ուղղված իր երկրորդ տրակտատում անգլիացի մտածողն անդրադառնում է նաև բոլոր նրանց, ովքեր ասում են, որ երբևէ չեն եղել բնական վիճակում գտնվող մարդիկ: Հեղինակը գրում է. «Մեզնից յուրաքանչյուրն ի սկզբանե գտնվում է բնական վիճակում, բայց քանի որ մեզնից ամեն մեկն անգոր է իրեն օժտելու կենսական իրերով, մենք այլոց հետ հաղորդակցվելու կարիք ենք ունենում, ու այսպես մարդիկ սկսում են աստիճանաբար ներգրավվել քաղաքացիական հասարակություններում: Մարդիկ մնում են բնական վիճակում այնքան ժամանակ, մինչև իրենց սեփական համաձայնությամբ չեն որոշում դառնալ քաղաքացիական հասարակության անդամ» [4, էջ 106]:

Հանգամանորեն նկարագրելով բնական վիճակը՝ Լոկն ուղղակիորեն չէր կարող չանդրադառնալ դրան հակակշռող, բնույթով ոչ խաղաղ մի վիճակի: Խոսքն իհարկե, պատերազմական վիճակի մասին է (State of War): Սա, ի տարբերություն բնական վիճակի, թշնամության և կործանարար գործողությունների վիճակ է: Բնության օրենքը թելադրում է, որ մարդու ինքնապաշտպանությունը չսփազանց կարևոր է, ուստի երբ որևէ մեկը սպառնում է մյուսին, ապա նրանք պատերազմական վիճակում են, և կարող են ոչնչացնել միմյանց: Պատերազմի վիճակ է առաջանում, երբ մեկը փորձում է ստրկացնել մյուսին՝ վերջինիս

հանդեպ գերիշխանություն հաստատելով: Սա, կարելի է ասել, մի իրավիճակ է, երբ դիմացինը նախագծում է կյանքը: Հեղինակն այստեղից հետևություններ է անում. «Եթե որևէ մեկն առանց իմ համաձայնության գերիշխանություն հաստատի ինձ վրա, կսկսի օգտագործել ինձ, ինչպես որ ուզի, իսկ վերջում կոչնչացնի ինձ» [4, էջ 107]: Հենց այստեղ է, որ Լոկն անդրադառնում է մարդու ազատությանը. մարդկային յուրաքանչյուր ազրեսիա մյուսի հանդեպ ունեցություն է դիմացինի ազատությանը: Մարդկանց՝ մեկը մյուսին հպատակեցնելը բնավ չի արվում կատարյալ ազատության վիճակում (State of Perfect Freedom): Մարդը գոյատևելու հավիտենական խնդիր ունի, և նման գերիշխող ուժերից ազատ լինելը մարդու գոյատևման, պահմանման ապահովությունն է: Իսկ նա, ով հավակնություն ունի մեկ ուրիշի ազատությանը, ինքնաբերաբար պատերազմական վիճակում է հայտնվում՝ բնականաբար վերջինիս վերաբերվելով որպես իր թշնամու:

Լոկը խստորեն հակադրում է բնական ու պատերազմական վիճակները: Բնական վիճակում մարդիկ ապրում են խաղաղ, առանց կառավարման կամ որևէ երկրային իշխանության: Քանի որ բնական վիճակում չկան հեղինակություններ, որոնք կդատեն մարդկանց, ովքեր փորձում են սահմանափակել ուրիշների ազատությունը, առաջանում է պատերազմական վիճակ: Պարզ է դառնում, որ երբ բնական վիճակ է, ու չկա ոչ մի դատավոր կամ իշխանություն, որը կվերահսկի իրավիճակը, ազրեսորն այն վերածում է պատերազմական վիճակի: Բնական վիճակում չկան ո՛չ օրենքներ, ո՛չ դատավորներ: Լոկի կարծիքով՝ ուժն առանց իրավունքի բավարար հիմք է պատերազմական վիճակ ստեղծելու համար: Պատերազմական վիճակն ավարտվում է այն դեպքում, երբ անմեղ մարդը ոչնչացնում է ազրեսորին, կամ երբ ազրեսորը, զիջումների գնալով, խաղաղություն է խնդրում:

Պատերազմի վիճակ է առաջանում նաև այն ժամանակ, երբ հասարակության մեջ գործող օրենքներն ու դատավորները, այսպես ասած, շեղվում են ճշմարիտ ուղուց: Որոշ հանգամանքներում օրենքները կարող են օգտագործվել պաշտպանելու նրանց, ում իրականում պետք է պատժել: Երբ օրենքը ձախողում է իր իրական նպատակի կատարումը, այն է՝ պաշտպանել անմեղին, առաջանում է պատերազմական վիճակ [4, էջեր 109-110]:

Այստեղ հարկ է նկատել, որ Լոկը, օգտագործելով պատերազմ եզրույթը, ըստ էության, նկատի ունի կոնֆլիկտ, քանի որ հեղինակը հիմնականում դիմում է ոչ թե պետությունների, այլ ազգերի միջև բախումների դիտարկմանն ու քննարկմանը՝ ներկայացնելով

վերջիններիս առաջացման պատճառները և ուղենշերով լուծման հնարավոր ճանապարհները:

Քաղաքացիական հասարակությունը կարող է գոյություն ունենալ, երբ մարդիկ հրաժարվում են սեփականության տնօրինման, ինչպես նաև օրինախախտին պատժելու իրավունքից՝ հանձնելով այն համաձայնության միջոցով ի հայտ եկած հեղինակություններին: Հասարակության անդամների մոտ ձևավորվում է համընդհանրության գաղափար. իրենց իսկ կյանքի, ազատության, գույքի կարևորության և ապահովության համար մարդիկ, ընդհանուր հայտարարի գալով, օժտում են որևէ մեկին/խմբին ուժով, որով էլ վերջինս ի վիճակի կլինի ապահովել հասարակության անվտանգությունը:

Քաղաքացիական հասարակությունն ուղղակիորեն չի կարող գոյություն ունենալ առանց կառավարվողների համաձայնության: Այսինքն՝ բացառապես ամեն ինչ կատարվում է համաձայնության միջոցով, և ոչ մի մարդ չի դառնում քաղաքացիական հասարակության անդամ իր կամքին հակառակ:

Արդեն իսկ պարզ է, որ ըստ հեղինակի՝ քաղաքացիական հասարակության ձևավորումը բացառապես խաղաղ գործընթաց է: Քաղաքացիական հասարակությունում գործող կանոններն անհրաժեշտ են, քանի որ անհնար կլինեք ամեն անհատի համար համաձայնել օրենքին: Երբ մարդիկ մտնում են քաղաքացիական հասարակության մեջ, պարտավորվում են համաձայնել մեծամասնության կարծիքին, որովհետև չուզենալով ենթարկվել այդ կանոններին և ինքնուրույն որոշումներ կայացնելով՝ նրանք կարող էին և մնալ բնական վիճակում: Լոկը պնդում է, որ աշխարհում միակ իրավական կառավարությունն այն է, երբ մարդիկ համաձայնում են ձևավորել քաղաքացիական հասարակություն՝ հրաժարվելով բնական վիճակում իրենց բնական ազատությունից: Համաձայնության արդյունքում ձևավորված քաղաքացիական հասարակությունը խաղաղության վիճակ է, որտեղ քաղաքացիական հասարակության անդամները ապահով են զգում, սակայն սա դեռ չի նշանակում, որ այստեղ չկան մարդիկ, ովքեր խախտում են մեծամասնության կողմից առաջադրված օրենքները: Նրանք, ովքեր համաձայնել են ստեղծել քաղաքացիական

հասարակություն, համաձայնել են նաև հրաժարվելու պատժելու և դատելու իրենց կարողություններից, հետևաբար հենց այստեղ է Լոկը տեսնում քաղաքացիական հասարակության օրենսդիր և գործադիր իշխանությունների առաջացման հիմքերը: Վերջիններիս միջոցով պետք է որոշվի՝ երբ և ինչպես պատժեն օրինախախտներին, և ինչ փոխհատուցումներ են անհրաժեշտ, երբ խախտվում է որևէ օրենք [4, էջեր 146-149]:

Այսպիսով, խոսելով քաղաքացիական հասարակության ձևավորման մասին՝ Լոկն ամբողջացնում է այն տեսակետը, որ մարդն իր ապահովության, խաղաղ գոյատևման, գույքի պահպանման համար բնական վիճակից համաձայնության միջոցով անցում է կատարում քաղաքացիականին, որտեղ գործում են համընդհանուր բարեկեցություն և անվտանգություն ապահովող համապատասխան օրենքներն ու կանոնները: Հեղինակը չի մոռանում նշել նաև այս գործընթացի լիովին խաղաղ բնույթ ունենալու փաստը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Friend, C.** Social Contract Theory, Internet Encyclopedia of Philosophy, Hamilton Collage, USA: <https://www.iep.utm.edu/soc-cont/#H6>, այց՝ (20.08.2021).
2. **Hampton, J.** Contract and Consent, A Companion to Contemporary Political Philosophy, 2nd Edition, ed. by Robert E. Gooden, Philip Pettit and Thomas Pogge, London, Blacwell Publishing Ltd, 2007.
3. **Hobbes, T.** Leviathan or the Matter, Forme & Power of a Common-wealth Ecclesiasticall and Civil London, Green Dragon in St. Pauls Churchyard, 1651.
4. **Locke, J.** Two Treatises of Government and A Letter Concerning Toleration, New Haven and London, Yale University Press, 2003.
5. **Tuckness, A.** The Stanford Encyclopedia of Philosophy, Lock's Political Philosophy, Stanford University, Summer 2018 edition: <https://plato.stanford.edu/entries/locke-political/>, այց՝ (20.08.2021).

Տճանաչվել է՝ 20.10.2021

Րեցենզիվանա/Գրախոսվել է՝ 29.10.2021

Մոտրվել է՝ 05.11.2021